

Շահբազյան Ա.

ՀՀ ԳԱՍ պատմության ինստիտուտ

1880 թ. Ալեքսանդր II կայսեր՝ փետրվարի 12-ի հրամանագրով Ռուսաստանում ստեղծվեց Գերագույն կարգադրիչ հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց կոմս Միխայիլ Տարիելի Լորիս-Մելիքովը։ Այն կոչված էր վերջ տալ հեղափոխական շարժմանը և կարգ ու կանոն հաստատել Ռուսական կայսրությունում։ Լորիս-Մելիքովը կողմ էր քարեփոխումների անցկացմանը Ռուսաստանում։ Դրանք պետք է իրականացվեին հասարակական-տնտեսական մի շարք ընդգրկվածություններով։ Նման քարեփոխումները զգալիորեն քարեփոխելու էին հասարակական կյանքը և վերակառուցելու էին պետական վարչական համակարգը։ ԳԿՀ-ի կողմից դադարեցվեց ժամկետական 3-րդ բաժանմունքի գործունեությունը, և վերանայվեցին բոլոր քաղաքատարածքային գործերը, կատարվեցին փոփոխություններ վարչական բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում, մշակվեց և կայսրին ներկայացվեց պետական քարեփոխումների մեծ ծրագիր։ Լորիս-Մելիքովի առաջարկությամբ 1880թ. օգոստոսին Գերագույն կարգադրիչ հանձնաժողովը դադարեց գոյություն ունենալուց։ Իր քարեփոխական հետագա գործունեությունը Լորիս-Մելիքովը շարունակեց ներքին գործերի նախարարությունում։

Шабазян А. Государственная деятельность графа Михаила Тариеловича Лорис-Меликова на посту начальника Верховной распорядительной комиссии России. 12 февраля 1880г. указом императора Александра II в России была создана Верховная распорядительная комиссия (ВРК), начальником которой был назначен граф Михаил Тариелович Лорис-Меликов. Задачей ВРК было приостановление революционного движения и установление правопорядка в Российской империи. М.Т. Лорис-Меликов был сторонником проведения социально-экономических реформ, в результате которых ожидалось значительное улучшение общественной жизни и переустройство государственной административной системы. Подобным путем Лорис-Меликов предлагал лишить революционные течения их социальной базы, после чего стало бы возможным приостановление революционного движения в России. Императору был предложен широкий пакет государственных реформ, которые получили его высочайшее одобрение. По предложению Лорис-Меликова, в августе 1880 г. деятельность Верховной распорядительной комиссии была приостановлена, Лорис-Меликов стал министром внутренних дел, продолжая претворять в жизнь необходимые для России реформы.

Shahbazian A. The Public Activity of Count M. T. Loris-Melikov as a Chief of Supreme Executive Commission of Russia. On February 12, 1880 by the supreme edict of Emperor Alexander II, the Supreme Executive Commission (SEC) was created in Russia, and count Michael Tarel Loris-melikov was appointed as a Chief of the Commission. SEC was proposed to stop the revolutionary movement in Russia and to establish civil order. The activity of M. T. Loris-Melikov aimed to better off social life and restructure state administrative system through public and economic reforms. By the fulfillment of this task, Loris-Melikov desired to destroy and prevent the social basis of revolutionary movement, which was approved by Emperor Alexander II. On August 1880 Loris-Melikov recommended stopping the activity of SEC. He was appointed to the post of the Minister of Internal Affairs and continued reformative activity.

1880թ. փետրվարի 5-ի պայթյունը Չմեռային պալատում, որը կազմակերպել էր մարդոգնիկ Խալատուրինը, մեծ իրարանցում առաջացրեց Ռուսաստանի կառավարող շրջաններում։ Իշխանությունների համար պարզ դարձավ, որ ներկա քաղաքական համակարգը չի արդարացնում իրեն։ Երկրում ծայրահեղորեն սրվել էր ներքաղաքական իրավիճակը, իսկ կառավարությունը ոչինչ չէր կարողանում անել այն կանխելու համար։ 3-րդ բաժանմունքը ի վիճակի չէր ապահովել նույնիսկ կայսեր ընտանիքի անվտանգությունը։

Փետրվարի 7-ին թագաժառանգի հետ խորհրդակցելիս Ալեքսանդր II-ը արտահայտեց այն միտքը, որ անհրաժեշտ է ձեռնարկել «ամենավճռական» քայիլը հեղափոխական շարժման անմախաղեպ վերելքը կասեցնելու ուղղությամբ [1]։ Փետրվարի 12-ին կայսրը ստորագրեց Գերագույն կարգադրիչ Հանձնաժողով (ԳԿՀ) ստեղծելու մասին հրամանագիրը։

Այսպիսով, Ռուսաստանում ստեղծվում էր մի նոր պետական մարմին։ Նրա հիմնական նպատակն էր «պետական և հասարակական կարգ ու կանոնի պաշտպանումը», ինչպես դա նշվում էր հրամանագրի 1-ին կետում [2]։ Ոչ մի պետական այլ մարմին կամ կառույց, այդ թվում նաև՝ ռազմական, իրավական, ի գործ չէին արգելակել նրա գործունեությունը։ Ընդհակառակը, պետական բոլոր կառույցները պետք է ամեն կերպ նպաստեին նրա գործունեությանը և առանց ստարկությունների կատարեին ԳԿՀ-ի բոլոր կարգադրությունները։ Ըստ տարածքային սկզբունքի նրա գործունեությունը տարածվում էր ողջ Ռուսաստանի վրա, իսկ ըստ բնույթի՝ այն պետք է ուղղված լիներ հեղափոխական շարժումների դեմ։ ԳԿՀ-ի նախագահ էր նշանակվում զենեքալ կոմս Միխայիլ Տարիելի Լորիս-Մելիքովը։

Փաստորեն այս նոր մարմինը իր իրավունքներով և առաքելությամբ բարձր էր կանգնած բոլոր այլ պետական կառույցներից, իսկ նրա նախագահին օժտված էր անսահմանափակ իշխանությամբ, ոչ որի չէր ենթարկվում և հաշվետու էր միայն կայսրին։

Պրոֆեսոր Զայնչևսկային իր «Кризис самодержавия на рубеже 1870-80-ых годов» աշխատությունում նշում է, որ Լորիս-Մելիքովը հենց սկզբից այլ կերպ հասկացավ իր վրա դրված պարտականությունները։ Նրա կարծիքով, այդ մասին են խոսում Միլյուտինի, Վալուևի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների վկայությունները։ «Լորիս-Մելիքովը իր նոր դերը հասկացավ ոչ թե որպես հետախուզական հանձնաժողովի նախագահ, այլ որպես մի դիկտատուր, որին ենթարկվում են ողջ իշխանությունները և նախարարները» [3]։

Մակայն պրոյեկտը՝ Լորիս-Մելիքովը ձգտում էր իշխանության՝ «հանուն իշխանության», և որո՞նք էին իրական պատճառները, որպեսզի նա ցանկանար իր ձեռքում կենտրոնացնել ողջ իշխանությունը։

Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակն այս շրջանում ծայրահեղորեն սրվել էր։ Քաղաքական ճգնաժամը հետևանք էր տնտեսական ծանր կացության։ 1860-70-ական թթ. քարեփոխումները չէին գործում անկատարության պատճառով։ Ռուսական կայսրության բնակչության ճնշող մեծամասնությունը դժգոհ էր իր կյանքից։ Մա էր հեղափոխական շարժման անվերջ խորացման պատճառը։ ԳԿՀ-ը կոչված էր բացահայտել և վերջ տալ հեղափոխական շարժումներին և վերացնել դրանց ծնող պատճառները։ Եվ եթե Ռուսական կայսրության կառավարող շրջանները այդ խնդիրը հասկանում էին որպես հետախուզական, ստիկանական բնույթի միջոցառումների իրականացում, ապա Լորիս-Մելիքովը դա պատկերացնում էր այլ կերպ։ Նրա կարծիքով, Ռու-

սակամ իրականությունը կարիք ուներ լուրջ բարեփոխումների: «Անհրաժեշտ է խել հողը հեղափոխական շարժման տակից», — սա էր նրա կարգախոսը: Այս քաղաքական ծրագրի իրագործումը պահանջում էր լայնածավալ, բազմաբնույթ միջոցառումների իրականացում և պահանջում էր պետական մարմինների համախմբված գործունեություն, որին ձգտում էր Լորիս-Մելիքովը, և որն էլ ոչ ճիշտ եզրակացությունների էր հանգեցնում նախարարներին: Նրանցից շատերը թշնամաբար էին տրամադրված անասանափակ լիազորություններով օժտված նոր պետական մարմնի և նրա նախագահի նկատմամբ: Այնուամենայնիվ, Լորիս-Մելիքովը, որպես հմուտ և հետառես թաղաքական գործիչ, հենց սկզբից մեծ եռանդով ձեռնամուխ եղավ այն բարեփոխումների իրականացմանը, որոնց անհամբեր սպասում էր Ռուսաստանը:

Առաջին քայլերից մեկը եղավ ժամդարմական 3-րդ բաժանմունքի ենթարկումը ԳԿՀ-ին: Փետրվարի 26-ին Լորիս-Մելիքովը զեկուցագիր ներկայացրեց կայսրին, որտեղ մանրամասն հիմնավորում էր թաղաքական հետախուզություններով զբաղվող այս մարմնի անկախ լինելու անթույլատրելիությունը: Լինելով ներքին գործերի համակարգից դուրս և ենթարկվելով միայն կայսերական գրասենյակին՝ այն բարդություններ էր ստեղծում ԳԿՀ-ի գործունեության համար: Զեկուցագիրը ընդունվեց, և մարտի 3-ին կայսեր հրամանագրով 3-րդ բաժանմունքը ենթարկվեց Լորիս-Մելիքովի գերատեսչությանը [4]:

ԳԿՀ-ի 1-ին ճիստը կայացավ մարտի 4-ին: Ի սկզբանե Լորիս-Մելիքովը շեշտեց, որ պետք է առանձնակի ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին. «1) բոլոր ժամդարմական-նստիկանական և դատական մարմինների աշխատանքների կարգավորում, 2) թաղաքական հանցագործությունների գործերի վարույթի արագացում, 3) ներկա վարչական արտաքսումների և թաղաքական արքայների վերանայում» [5]:

Ինչու՞ էր պայմանավորված վերոհիշյալ հարցադրումների անհրաժեշտությունը:

Պետք է ասել, որ այս շրջանում ռուսիկանական, դատական և քննչական մարմինների անկատարությունը ծնում էր ամենատարբեր հակասություններ հասարակության մեջ: 1864թ. դատական ռեֆորմով դատարանը Ռուսաստանում հավասարեցվեց «ելլոտական ստանդարտներին»: Բայց ֆեոդալական հասարակության մնացուկներից դեռևս լուրջ ուժ էին և շարունակում էին գործել: Ռուսաստանում խոր հակասություն էր առաջացել ազնվական ավանդական իրավական ինստիտուտի և նոր դատական օրենսդրության միջև: Մի կողմից, նոր օրենսդրությունը չէր արտահայտում ռուսական ավանդույթները և կտրված էր իրականությունից, մյուս կողմից՝ այն ազնվականության համար առավել բարենպաստ պայմաններ էր ստեղծում թափանցելու նոր դատաիրավական համակարգ և պաշտպանելու սեփական շահերը: Այս ամենը ժողովրդի ցածր խավերում առաջացնում էր դժգոհություն՝ պարարտ հող ստեղծելով հեղափոխական հոսանքների համար:

Հեղափոխական շարժումներն ինչ-որ կերպ զսպում համար ցարիզմը ուժեղացնում էր ժամդարմերիայի դերը՝ հետևողականորեն շարունակելով բռնության ու ճնշման քաղաքականությունը: 1871թ. մայիսի 19-ի օրենքով ժամդարմերիային հանձնվեց թաղաքական գործերի քննումը դատախազական մարմինների մասնակցությամբ: Իսկ 1878թ. սեպտեմբերի 1-ի «ժամանակավոր կանոնների» համաձայն 3-րդ բաժանմունքը իրավունք ստացավ ձեռքարկվելու յուրաքանչյուրին, ով կմեղադրվեր թաղաքական հանցագործությունների մեջ:

Սակայն Լորիս-Մելիքովն առաջարկեց այս խնդրի լուծման այլ տարրերակ: Մարտի 10-ին կայսեր կողմից հաստատվեցին Լորիս-Մելիքովի առաջարկությունները, համաձայն որոնց 3-րդ բաժանմունքը պարտավոր էր բոլոր գործերով խորհրդակցել նահանգապետերի հետ: Սա առաջին քայլն էր, որով սկսվում էր ռուսիկանական մարմինների ենթարկումը տեղական վարչական մարմիններին: Բացի այդ, վերանայվեցին գրեթե բոլոր քաղաքատարկայնների գործերը, մեղմացվեցին արտաքսվածների պատիժները: Առաջարկվեց մեղմացնել հատկապես ռուսնոդների պատիժները, իսկ մնացած արքայազների գործերի վերանայումը կատարել տեղական իշխանությունների առաջարկությունների հիման վրա: Այս բոլոր առաջարկություններն ընդունվեցին Ալեքսանդր II-ի կողմից:

Ապրիլի 11-ին Լորիս-Մելիքովը Ալեքսանդր II-ին ներկայացրեց գործունեության համալիր ծրագիր: Նախ նշվում էր, որ Ռուսաստանում ստեղծվել էր ծայրահեղորեն լարված ներքաղաքական իրավիճակ, մույնիսկ «...ռուսական հողի ցարը, 90 մլն հայատակների տերը, իրեն չէր կարող անվտանգ զգալ սեփական բնակարանում...» [6]: Այնուհետև նա նշում էր ձեռնարկված օպերատիվ միջոցառումները: Հանցագործ տարրերի ձեռքարկման և կարգ ու կանոնի հաստատման համար կենտրոնացվել էին բոլոր ժամդարմական, ռուսիկանական և դատական մարմինները: Սակայն նման միջոցառումներով հարցը չէր կարող լուծվել: Անհրաժեշտ էր պարզել դժգոհությունների առաջացման իրական պատճառները: Որպես «պետական կարգն ու հասարակական հանգստությունը պաշտպանելու համար իրականացվող կարևորագույն միջոցառումներ»՝ Լորիս-Մելիքովը առաջարկում էր հետևյալ միջոցառումները.

* Բացահայտել վտանգավոր հակապետական ուսմունքների տարածման օջախները:

* Այս ուղղությամբ արդյունավետ աշխատելու համար բարելավել ժամդարմական, ռուսիկանական և դատական մարմինների գործունեությունը:

* Կատարել հարկային ռեֆորմ, վերանայել անձնագրային համակարգը, հեշտացնել գյուղացիների տեղաշարժը այն նահանգներում, որտեղ հողի բերքատվությունը ցածր է, սահմանել վարձու բանվորների և գործարանատերերի միջև փոխհարաբերությունները կարգավորող օրենքներ, վերանայել նահանգային վարչական համակարգը:

* Մշակել նոր թաղաքականություն մամուլի նկատմամբ: Եթե Արևմուտքում մամուլն արտահայտում էր հասարակական կյանքը, ապա Ռուսաստանում այն ավելի շուտ ազդում էր հենց դրա ձևավորման վրա [7]:

* Մեծ կարևորություն էր տրվում ժողովրդական կրթությանը: Նշվում էր, որ անհրաժեշտ էր վերականգնել լուսավորության նախարարության և ընդհանրապես լուսավորության համակարգի վստահությունը ժողովրդական խավերի մոտ: Որպես առաջին քայլ՝ առաջարկվում էր անհապաղ փոփոխություններ կատարել նախարարության ղեկավարության մեջ:

* Ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները: Թույլ տալ նրանց ինքնուրույն և միմյանց հետ խորհրդակցելով՝ որոշել համաճարակների դեմ պայքարի միջոցառումները: Որոշել զենսավորների մասնակցության չափը ժողովրդության հարցերում, իրավունք տալ մահամեղային և զավառային զենսավորական խորհուրդներին հրավիրել իրենց միատերին կողմնակի անձանց, ինչպես դա թույլ էր տրվում քաղաքային դոմաներին:

* Բարեփոխումների գործում, Լորիս-Մելիքովի կարծիքով, պետք էր ներգրավել հասարակության բոլոր մտածող մարդկանց: Տեղական ինքնակառավարման խնդիրների լուծման գործում ուշադրություն դարձնել քաղաքային, զենսավորական և ազնվականության առաջարկություններին:

Առավել կարևոր նշանակություն է ձեռք բերում հետևյալ հանգամանքը: Ապրիլի 11-ի զեկուցագրի վերջում Լորիս-Մելիքովը նշում էր, որ Գերագույն կարգադրիչ հանձնաժողովը կոչված էր պետական և հասարակական կարգ ու կանոն ապահովելու: Նման բարդ ու լայնածավալ խնդրի լուծման համար պահանջվում էր բոլոր նախարարությունների աշխատանքի կոորդինացում: Փաստորեն, հարց էր դրվում ԳԿՀ-ի ֆունկցիաների զգալի մեծացման մասին [7]:

Ձեկուցագիրը Ալեքսանդր II-ի կողմից հավանություն ստացավ, որով և, կարելի է ասել, ամրագրվեց Լորիս-Մելիքովի դիկտատուրան:

Ծրագրի իրականացումը սկսվեց նրանից, որ լուսավորության նախարարի պաշտոնից ազատվեց կոմս Տոլստոյը: Այս իրադարձությունը մեծ խանդավառությամբ ընդունվեց՝ առաջ ժողովրդի բոլոր խավերի կողմից: Ինչպես նշում էր Նարոդնիկ Սիխայրովսկին. «Ժողովրդական խավառության նախարարի ազատումը պաշտոնից իրոք պետք է համարել դիկտատուրի մեծ ծառայությունը»: Եռանդուն աշխատանքներ սկսվեցին 3-րդ բաժանմունքի գործերի վերամայման ուղղությամբ: Պարզվեց, որ 3-րդ բաժանմունքի կողմից առանց հիմնավոր հանցակազմի պատժամիջոցներ էին կիրառվել բազմաթիվ մարդկանց նկատմամբ: Գործերի քննությունը գտնվում էր ցածր մակարդակի վրա, և, ընդհանրապես, բաժանմունքի աշխատանքները վատ տպավորություն էին թողնում [9]: Զննարկումներ սկսվեցին գյուղացիական խնդիրների լուծման ուղղությամբ: Այսպես, հավանություն ստացավ բարոն Լևինի նախագիծը տեղական և համառոտական համագումարների հրավիրման վերաբերյալ:

Ամռանը Լորիս-Մելիքովի կողմից բարձրացվեց Գերագույն կարգադրիչ Հանձնաժողովի լուծարման հարցը: Այս նպատակով հուլիսի 26-ին նա զեկուցագիր ներկայացրեց կայսրին: Ներածական մասում նշվեց, որ ԳԿՀ-ն լուծել էր իր վրա դրված հիմնական խնդիրը, այն է՝ օրինապահության հաստատումը: Սակայն, պետական կարգ ու կանոնի և հասարակական հանգստության ապահովումը պահանջում էին երկարաժամկետ բարեփոխումների իրականացում: Դրանք պետք է իրականացվեին կառավարության և ժողովրդի համատեղ ջանքերով: Անցնելով ԳԿՀ-ի հետագա ճակատագրին՝ Լորիս-Մելիքովը նշում էր, որ այն այլևս չէր կարող գոյատևել որպես պետական մշտական մարմին. «...նրա գործունեությունը, որպես և յուրաքանչյուր մարմնի, որն օժտված է բացառիկ իշխանությամբ, չպետք է լինի երկարատև, հակառակ դեպքում այն կխափանի պետական կառավարման բնականոն ընթացքը, կրեթի լատենաշիթություն պետական համակարգի գործունեության մեջ, առաջ կբերի սխալ պատկերացումներ մեր գործունեության մասին» [10]: Նրա կարծիքով, անհրաժեշտ հարցերի հետագա լուծումը պետք էր կապել ներքին գործերի նախարարության հետ: Այս առումով նա առաջարկում էր վերացնել 3-րդ բաժանմունքը՝ հանձնելով նրա պարտականությունները ներքին գործերի նախարարությանը: Միաժամանակ նա անհրաժեշտ էր համախմբել առանձնացնել նախարարությունից փոստը, հեռագրատունը, վերապահելով նրա լիազորությանը՝ զբաղվել քաղաքական, զենսավորական և տպագրական գործերով:

Ձեկուցագիրը հավանություն ստացավ Ալեքսանդր II-ի կողմից: ԳԿՀ-ն լուծարվեց, իսկ Լորիս-Մելիքովը նշանակվեց ներքին գործերի նախարար:

Գերագույն կարգադրիչ Հանձնաժողովը՝ որպես ուսիկանական, հետախուզական բնույթի կառույց, օժտված էր բացարձակ իշխանությամբ, և նրա հիմնական նպատակն էր հայտնաբերել և ձեռքակալել քաղաքական հանցավոր տարրերին: Սակայն կոմս Մ.Տ. Լորիս-Մելիքովի նշանակումը որպես ԳԿՀ-ի նախագահ արմատապես փոխեց այդ մարմնի գործունեության բնույթը: Փաստորեն ԳԿՀ-ի ստեղծումը հանգեցրեց Ռուսաստանում մեր բարեփոխումների գործընթացի, որը կոչված էր էականորեն փոխել Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակն ու զգալիորեն բարելավել հասարակական կյանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Татищев С.С. Император Александр II. Его жизнь и царствование. Кн. II. Изд. 2. СПб., 1911, с. 541-612. Зайончковский П.А., с. 150.
- [2] Литвак Б.Г. Переворот 1861г. в России: почему не реализовывалась реформаторская инициатива. М., 1991, с. 292-298.
- [3] Зайончковский П.А. Кризис самодержавия на рубеже 1870-80 годов. М., 1964, с. 155-156.
- [4] Зайончковский П.А. - 624, 221, 164.
- [5] Татищев С.С. - 604, 221, 164.
- [6] Зайончковский П.А. - 624, 221, 164.
- [7] Зайончковский П.А. - 624, 221, 164.
- [8] Даниелян Г.Г. Генерал граф Лорис-Меликов. М., 1997, с. 80-83.
- [9] Даниелян Г.Г. 624, 221, 164.
- [10] Зайончковский П.А., 624, 221, 164.